

Դանդաղ գնալը դեռ հեռուն հասնել չի նշանակում

Այսօր հաճախ են խոսում այն մասին, որ հայրենական գիտության բարեփոխումների գործընթացը ձգձգվում է: Չնայած երբեմն մտածում ես, թե գուցե լավն էլ դա է. չէ՞ որ շտապողականությունն այնպիսի հարցում, ինչպիսին «գիտապաշարի» նորացումն է, երբեք ճիշտ չէ: Ամբողջ խնդիրն այն է, թե որքան ժամանակ կա մեր տրամադրության տակ կամ ընդհանրապես կա՞: Հայկական գիտության ամենացավոտ խնդիրներից մեկը շարունակում է մնալ «ուղեղների արտահոսքը»: Համենայնդեպս այդպես է մտածում ՀՀ գիտության և կրթության նախարարության գիտության հարցերով պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը: Խնդիրն ամեննին էլ նոր չէ. արդեն գրեթե երկու տասնամյակ է՝ Խորհրդային Միության քայքայումից անմիջապես հետո մեր երկրում սկսվել է գիտնականների արտահոսք դեպի արտասահման: Չնայած ոչ ոք չի վիճարկում այն ճշմարտությունը, որ գիտությունը պետք է բաց համակարգ լինի, այն չի կարող զարգանալ առանց միջազգային համագործակցության: Պարզ ասած՝ ոչ մի վատ բան չկա, որ մեր գիտնականները գնում են արտասահման՝ աշխատելու և փորձ կուտակելու համար: Բայց խնդիրն այն է, որ մեր մասնագետներից շատերը գնում են և այլևս չեն վերադառնում:

«Ուղեղների արտահոսքից» բացի նկատվում է մեկ այլ գործընթաց. երիտասարդ գիտաշխատողները փոխում են իրենց գործունեության ոլորտները, որովհետև չնչին աշխատավարձերը վանում են խոստումնալի մասնագետներին: Իսկ վերնախավն այդ ընթացքում ծերանում է:

«Եթե այսպես շարունակվի՝ հետևանքներն աղետալի կլինեն: Չէ՞ որ ավագ սերունդն աստիճանաբար հեռանում է, իսկ նրանց փոխարինողներ փաստորեն չկան: Դրա համար էլ գիտության բնագավառը մեր երկրում «ծերանում է»... Թեկնածուների միջին տարիքը 54-55 է, իսկ դոկտորներինը՝ 63-65: Սրանք մտահոգիչ թվեր են, և արդեն այսօր է անհրաժեշտ Հայաստանում ստեղծել այնպիսի պայմաններ, որ երիտասարդ գիտնականները մնան և աշխատեն մեր երկրում կամ էլ գոնե պահպանվի մեկնողների և եկողների հավասարակշռությունը: Հակառակ դեպքում մենք անդառնալի կորուստներ կունենանք», — ասում է Սամվել Հարությունյանը:

Ֆինանսավորման մասին

Պարոն Հարությունյանի կարծիքով խնդրի լուծումը հիմնականում պայմանավորված է կրթության համակարգում իրականացվող բարեփոխումների արդյունավետությամբ. եթե կրթական համակարգը պատրաստի աշխատանքի շուկայում պահանջարկ ունեցող մասնագետներ, խնդիրները զգալիորեն կնվազեն: Չի կարելի ասել, թե պետությունն անուշադրության է մատնել գիտության ապագան: Վերջին տարիներին քիչ բան չի արվել, սակայն հիմնական խնդիրը շարունակում է մնալ ֆինանսավորումը. գիտությունն այսօր էլ շատ թերի է ֆինանսավորվում: Հիմնականում շեշտադրվում են կիրառական, ոչ թե հիմնարար հետազոտությունները, որոնք առևտրային բնույթ, հետևաբար արագ հաջողության հասնելու նպատակ չունեն: Չնայած սույն հանգամանքն ամեննին չի նշանակում, թե դրանք անօգուտ են և անհեռանկարային: Հիմնարար և կիրառական գիտությունները սերտորեն փոխկապակցված են, դրանց նպատակներն են տարբեր: Առաջինի նպատակը նոր գիտելիքներ ստանալն է, երկրորդինը՝ նոր տեխնոլոգիաներով եկամուտ ապահովելը: Երկրի համաչափ զարգացման համար պետք է և մեկը, և մյուսը: Ընդ

որում հիմնարար գիտության հայտնագործությունները կարող են մեկընդմիջտ փոխել կիրառական գիտության նվաճումների գնահատումը: Այդպես եղավ օրինակ Ամպերի փորձերի պարագայում, երբ աշխարհն իմացավ, թե ինչ բան է էլեկտրականությունը: Այդպիսի օրինակները շատ են: Ժամանակակից բոլոր նվաճումներն իրենց գոյության համար պարտական են հիմնարար գիտությանը:

Զարգացած երկրներում տեսական գիտությունը հիմնականում ֆինանսավորում է պետությունը: Մեր երկրում գիտության տարեկան ֆինանսավորումը 24 մլն դոլար է, իսկ դրամաշնորհային ծրագրերի հետ՝ 30 մլն դոլար: «Դրանք փոքր գումարներ են, և միանգամայն բնական է, որ մեր գիտնականները ձգտում են իրենց ներուժն իրացնել արտասահմանում»,—ասում է ԳՊԿ-ի նախագահը և հավելում, որ ԱՄՆ-ում նման փողերով մեկ տարվա ընթացքում մեկ համալսարան է աշխատում, իսկ մեր երկրում մի ամբողջ բնագավառ՝ գրեթե հարյուր գիտական հաստատություններով հանդերձ:

Վերափոխման փորձեր

Եվ այսպես՝ ամեն ինչի հիմքում հայրենական գիտությանը հատկացվող բյուջեն է: Չէ՞ որ եթե մենք ուզում ենք գրավել երիտասարդ մասնագետներին՝ պետք է նրանց բարձր աշխատավարձ վճարենք, ապահովենք լավ պայմաններով և ոչ թե կաթող կտուրներով շինություններով, ունենանք ժամանակակից փորձարաններ և այլն: Այդ ամենը հսկայական ծախսեր է պահանջում, որոնց համար մենք փող չունենք: Ավելին՝ պարոն Հարությունյանի խոսքերով վերջին 30 տարիներին Հայաստանում գիտական սարքավորումների և ոչ մի թարմացում չի կատարվել: Առանձին փորձարաններ ձեռք են բերել ժամանակակից որոշ սարքավորումներ, բայց բացառապես դրամաշնորհային միջոցների հաշվին, որոնցով առանձնապես հեռուն չես գնա:

Կատարվածի պատկերն ավելի լավ հասկանալու համար բավական է ասել, որ այսօր այնպիսի փոքր երկրում, ինչպիսին մերն է, հաշվվում է 85 գիտական հաստատություն, որոնցից շատերը թեմատիկ տեսակետից միմյանց կրկնությունն են: «Այդ քանակությամբ ինստիտուտներ պահելու համար անրաժեշտ է ներկայիս բյուջեից առնվազն 20 անգամ մեծ բյուջե»,—ասում է գիտության հարցերով պետկոմիտեի նախագահը: «Բայց մեզ նման փոքր երկրի ինչի՞ն են պետք այսքան գիտական հաստատությունները, որոնք հաճախ հենց նույն գործով են զբաղվում: Գիտության բնագավառում օպտիմալացման անհրաժեշտությունը մեր երկրում արդեն վաղուց է հասունացել: Հիմա խաղի նոր կանոններ են պետք՝ ժամանակակից միտումներին համահունչ: Դրա համար էլ ավելի լավ է միավորել նույն թեմատիկայով զբաղվող ինստիտուտները, և ունենալ 30-40 լուրջ հաստատություն, որոնք կզբաղվեն պետական նպատակային խնդիրների լուծմամբ: Ահա այդ ժամանակ բյուջեի միջոցներն ավելի արդյունավետորեն կծախսվեն, և միանգամայն հնարավոր կդառնան այդ հաստատություններն անհրաժեշտ սարքավորումներով ապահովելը, շինությունները վերանորոգելն ու մարդկանց պատշաճ վարձատրելը»,—ելք է առաջարկում պարոն Հարությունյանը: Բայց հենց այստեղ էլ, ինչպես ասում են, թաղված է շան գլուխը: Չափից շատ են «բայցերը», դրանք ըստ էության արգելակում են հայրենական գիտության բարեփոխումները: Եվ գլխավոր խոչընդոտը մեր գիտական հաստատությունների պահպանողականությունն է: Դրանցից շատերում, պատմում է մեր զրուցընկերը, արդեն հարմարվել են եղած պայմաններին և գոյատևման ուղիներ են գտել՝ դրամաշնորհային միջոցների, շենքը վարձակալման հանձնելու և նման այլ բաների հաշվին: Դրա համար էլ ցանկացած նորամուծություն սվիններով են դիմավորում: Գիտության կազմակերպման ներկա կառուցվածքի պայմաններում, երբ տեղական գրեթե բոլոր գիտական

ինստիտուտները գործունեության հարմար դաշտ են ձևավորել, որևէ նորություն միանգամից դատապարտվում է ձախողման:

Երկրորդ «բայցը» մեզ սահուն կերպով վերադարձնում է բյուջեի պակասուրդի խնդրին: Հենց ֆինանսական պաշարների բացակայությունն է, որ թույլ չի տալիս կոնկրետ ծրագրեր իրականացնել: Չէ՞ որ եթե այնուամենայնիվ որոշվի մի քանի ինստիտուտ փակել կամ միավորել, դրան հաջորդող քայլերը պետք է լինեն ինստիտուտների վերանորոգումը, ժամանակակից սարքավորումներով և փորձարաններով կահավորելը: Հակառակ դեպքում միավորումը կհանգեցնի նրան, որ մենք կկորցնենք անգամ ունեցածը: Ուրեմն բյուջեի պաշարների պակասն արգելակում է այս գործընթացը, քանի որ չի կարելի որևէ լայնածավալ ծրագիր սկսել՝ առանց անհրաժեշտ միջոցների առկայության:

Իսկ վստահություն, միևնույն է, չկա

Համաշխարհային փորձը վկայում է, որ նման փակուղային վիճակից դուրս գալու ելք այնուամենայնիվ լինում է: Օրինակ նախորդ դարի 60-ականներին Իսրայելի գիտությունը համարյա նույն վիճակում էր: Եվ ահա պետության և հրեական սփյուռքի հասկացրած գումարներով ձևավորվեց 500 մլն դոլար մեկնարկային կապիտալով վենչուրային հիմնադրամ, որն ուղղված էր ռիսկային ծրագրերի և գիտությունն արագ զարգացնելու ֆինանսավորմանը: Արդյունքը չուշացավ՝ ընդամենը 5-6 տարվա ընթացքում գիտության բնագավառում լուրջ առաջընթաց եղավ:

Վենչուրային հիմնադրամ ստեղծելու նման մի մտահղացում էլ մեր կառավարությունն է ձգտում ներդնել: Արդեն հաջորդ տարվա սկզբից պետբյուջեով առաջին անգամ ֆինանսավորվելու են նորարարական բաղկացուցիչով ծրագրերը: Խոսքը 100-150 հազարական դոլարի մասին է: Բայց պետությունը պարտավորվում է բոլոր ծախսերն ստանձնել այն պայմանով, որ պահանջված միջոցների 15-20 տոկոսը ներդնի շահագրգիռ մասնավորը:

Ավաղ, գիտական հանրությանը դեռ չի հաջողվում ընդհանուր լեզու գտնել մեր ձեռներեցների հետ: Վերջիններս չեն վստահում հայրենական գիտությանը՝ իրենց տեխնիկական խնդիրների լուծման համար նախընտրելով օգտագործել արտասահմանյան գիտական մշակումները: «Սակայն չկա այդպիսի տեխնիկական խնդիր, որը մեր գիտությունն ի վիճակի չլինի լուծել: Պարզապես մեր մասնավոր սեկտորը դա դեռ չի հասկացել, նա չի գիտակցում և չի գնահատում գիտության դերը՝ ի տարբերություն այլ երկրների, որտեղ գիտական բնագավառի ֆինանսավորումը 50 տոկոսով իրականացնում է մասնավորը», — պարզաբանում է պարոն Հարությունյանը:

Հանուն արդարության ասենք՝ որպեսզի ձեռներեցը վստահի գիտնականին, համապատասխան պայմաններ են անհրաժեշտ, ինչը չի ժխտում նաև գիտության հարցերով պետկոմիտեի ղեկավարը: Իսկ հայ գործարարն այսօր տեսնում է այն սարքավորումներն ու փորձարանները, որտեղ աշխատում են մեր գիտնականները և հասկանում է, որ այդ ամենն անհուսալիորեն հնացած է: Էլ ինչո՞ւ պետք է նա լրջորեն վերաբերվի նրանց մշակումներին: Փակ շրջան է. Միության քայքայումից հետո այս բոլոր տարիներին տեղական ձեռներեցները մինչև վերջ չընկալեցին շուկայական հարաբերությունների բուն էությունը, իսկ գիտության բնագավառն էլ դեռ պատրաստ չէ նրանց առաջարկել ավելին, քան կարող են ստանալ արտասահմանից: